

ՄԵՆԿ

Տարեկան դիմել 10 րոպէ կէս տարւան 6 րոպէ:

Թիֆլիսում գրւում են միմայն խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Менка“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և աստօրեայից):

Յայտարարութիւն ընդունւում է ամէն շաբաթ:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւքանչիւր բառին 2 կոպէկ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ

Քաղաքական վերջին անցքերը:—Ներքին տե-
սութիւն: Հայոց թատրոն: Նամակ Ալեքսան-
դրապոլից: Նամակ Թէլաւից: Ներքին լուրեր:—Ար-
տաքին տեսութիւն: Աւստրո-Ունգարիա:
Ֆրանսիա: Մանկութիւն: Եպիսկոպոսի պատասխանը:
—Մշակիչ հեռագիրներ:—Յայտարարութիւններ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՆՅՔԵՐԸ

Ներկայ համարի արտաքին տեսութեան բաժնում տպուած յօդուածից Աւստրո-Ունգարիայի մասին պարզ երևում է, որ աւստրիական առաջին մինիստր կոմս Լանգրաշի յօդուած է արևելեան քաղաքականութեան մէջ: Այդ իրողութիւնը քաղաքական վերջին անցքերից ամենանշանաւորը կա-
րելի է համարել:

Աւստրո-թիւրքաց դաշնադրու-
թիւնը Բոսնիայի և Հերցեգովի-
նայի մասին մի հարուած է աւստրիացի ազգասէրների ինքնասի-
սիրութեան համար:

Աւստրո-Ունգարիայի արևելեան քաղաքականութիւնը ձգտում էր որքան կարելի է ճնշել սլաւեան ցեղերը և ոչնչացնել Ռուսաստանի ազդեցութիւնը այն ազգութիւն-
ների վրա, որոնք բնակեցրած են բալկանեան թերակղզու վրա: Աւստրիային չէր յաջողւեց հասնել իր նպատակին:

Աւստրո-թիւրքաց վերջին դաշ-
նադրութեան արած տպաւորու-
թիւնը ցոյց տալով համար բա-
ւական է բերել այստեղ «Deutsche Zeitung» լրագրի յօդուածներից մէկի կողմը:

Յանկանալով մեկնել այն տը-
րամադրութիւնը, որի մէջ գտնու-
ւում է հասարակութիւնը Աւստրո-թիւրքաց դաշնադրութեան հետ ծանօթանալուց յետոյ, մենք պէտք է խօսքեր փնտռենք: Գուցէ մենք լաւ մեկնած կը լինենք այն ինչ որ գգում են և պէտք է ըզ-
գան բոլոր աւստրիացիները, եթէ կասենք, որ մենք չվարված ենք: Չը գիտենք թէ մենք աւելի պէտք է ցաւենք, թէ զարմանանք: Երդէօք մենք իրաւունք չունենք ասելու, որ աւստրիական ոչ մի մինիստր երբէք այդպիսի ստու-
րացնող դաշնադրութիւն չէ կա-
պել: Այդպիսի դաշնադրութիւն

ստորագրում են այն ժամանակ երբ յաղթված են լինում պատե-
րազմական դաշտի վրա և երբ ձգտում են քաղաքականութեամբ ձեռք բերել այն, ինչ որ չը կարողացան պահել զինուորական ոյժով: Բայց մենք դեռ ևս յաղ-
թված չենք:»

Լրագիրը յոյս է յայտնում և միթիւարում է հասարակութիւնը նրանով որ աւստրիական կայսրը չի հաստատի այդ դաշնադրու-
թիւնը: «Աւստրիան պատուում է իր կայսրին, աւելացնում է լրա-
գիրը, իբրեւ իր պատուի ամենալաւ պաշտպանին:» Եւթող մնաւոր մե-
ղադրում է կոմս Լանգրաշին, բա-
ցի չեխական լրագիրներից, որոնք գործի վրա մի այլ տեսակէտից են նայում: Այդ լրագիրները այն միտք են յայտնում, որ աւստրիա-
կան արևելեան քաղաքականու-
թեան անաջողութեան պատճառը ոչ թէ կոմս Լանգրաշին է, այլ նոյն իսկ Աւստրո-Ունգարիայի ներքին դրութիւնը: Աւստրո-Ուն-
գարիայի ներքին դրութիւնը այն պէս է, որ աւստրիական պետու-
թիւնը իր արտաքին քաղաքակա-
նութենից աւելի լաւ հետևանքներ չէր կարող սպասել:

Այդ տեսակետը Աւստրո-Ուն-
գարիայի վերաբերութեամբ, բոլորովին իրաւացի է:

Աւստրո-Ունգարական պետու-
թեան ազգաբնակչութիւնը քիչով պակաս է Գերմանիայի ազգա-
բնակչութենից, մինչդեռ նա հազիւ թէ Խալիպայի չափ միջազգային նշանակութիւն ունի: Խալիպան Աւստրիայից 10 միլիոնով պակաս ազգաբնակչութիւն ունի, բայց մի և նոյն ժամանակ կարող է հետևել իր ազգային, անկախ արտաքին քաղաքականութեանը, մինչդեռ Աւստրո-Ունգարիան արտաքին գործերում ոչ մի քայլ չէ կարող անել առանց նախապէս համա-
ձայնելու Գերմանիայի, կամ Մե-
գլիայի հետ: Աւստրո-Ունգարիայի այդպիսի անբնական դրութեան պատճառը նրա ներքին կազմակեր-
պութիւնն է: Երբէք մի պետու-
թիւն չէ կարող ամրութիւն ու-
նենալ, քանի որ նրա ազգաբնա-
կութիւնը ոչ թէ միայն ոչինչ ընդհանուր չունէ պետական քա-

ղաքականութեան հետ, այլ մինչև անգամ առաջինի շահերը բոլորովին հակադրական են երկրորդի շահերին:

Վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Զորքը լքելով, մայիսի 16-ին հայ թաւ-
րոնասէրների խումբը Թիֆլիսի ամառային թատրոնում բարեգործական նպատակով ներ-
կայացրեց «Սէր և նախապաշարունակ» կոմ-
երից արարուածով հեղ. Մելիքի թարգ. Ա. Բարսեղեանի և «Աշնանային երեկոյ», որ կրկնվեցաւ հասարակութեան ցանկութեամբ: Կոմերիայի և փոքրիկի անտրակտում պ. պ. Ալեքսանտեան և Սուքիասեան կարգացին, առաջինը մի բանաստեղծութիւն, իսկ երկրորդը Թիֆլիսի բառարանը գրված մի պատկեր:

«Սէր և նախապաշարունակ» պիեսային մասնակցում էին. օր. Վ. Պաշայեան (Լելի, լորդ Հաստինգսի աղջիկ), պ. Ն. Միրզոյեան (լորդ Հաստինգ), Վ. Մամիկոնեան (Սիւլիվան, դերասան), Մ. Պետրոսեան (սեր Ֆրէդերիկ, Լելիի փեսայացուն), Գ. Վարձելեան, Ն. Ալեքսանտեան, Ա. Սուքիասեան, Ա. Վարձելեան, որոնք կատարում էին լորդ Հաստինգի հիւրերի դե-
րերը:

Թէպէտ «Սէր և նախապաշարունակ» պիեսան մի քանի անգամ ներկայացրած է, աւելորդ չենք համարում նրա բովանդակութիւնը պատ-
մել:

Սիւլիվան, դրամատիկական դերասանը բե-
մի վրա կատարում է Համիտի դերը: Այն բոլորին, երբ Համիտ խօսում է իր հօր ու-
րուականի հետ, երբ սա իր որդուց խնդրում է վեճ առնել իրան սպանողներից, դերասա-
նի աչքերը պատռահամբ դառնում են դէ-
պի օթեաները, որոնցից մէկի մէջ նա նկատում է ամի հրեշտակ արտասուքները աչ-
քերին» (Լելի, օր. Վ. Պաշայեան): Մահնետի-
կական ընթացքը թափանցում է երկուստ-
սարդների սրտերի մէջ, նորա դիւթական զօ-
րութեամբ սիրահարում են: Աղջկայ հայրը այդ մասին տեղեկութիւն ստանալով, աշխա-
տում է հեռացնել երկուստսարդ սիրահար-
ներին: Նրա լորդական ինքնասիրութիւնը չէ համբերում, որ իր աղջիկը ամուսնանայ ամի դերասանի, մի Ֆիդելարի հետ: Լորդը հը-
րաւիրելով Սիւլիվանին իր մօտ խնդրում է նը-
րան հեռանալ Լոնդոնից մեծ գումար խոս-
տանալով, բայց երբ Սիւլիվանը չէ համաձայ-
նում լորդը պատմում է նրան իր աղջկայ սէրը և յայտնում է, թէ ինչքան անպատեհ է լորդի համար դերասան փեսայ ունենալ: Սիւ-
լիվանը չի մանալով, որ թատրոնում տեսած և իր սիրած օրիորդը լորդի աղջիկն է, խոս-
տանում է նրան բժշկել Լելիին նրա սիրուց մի ճաշի ժամանակ, որ լորդը պէտք է տար Սիւլիվանին և իր մի քանի բարեկամներին: Լորդը համաձայնում է:

Ճաշի ժամանակ Սիւլիվանը նկատում է որ Լելին նոյն աղջիկն է, որին տեսել է թատ-
րոնում և որին սիրում է, բայց որովհետեւ

խօսք էր տուել լորդին, ստիպված է կատարել իր խոստումը: Նա ճաշի ժամանակ իրան ար-
բեցող է ներկայացնում, անպատուում է հիւ-
րերին, ամաններ է կոտրում, թուղթ է խաղում, օրիորդի հետ արհամարհանքով խօսում է ար-
հեստի վրա, վերջապէս այնքան զգվացնում է Լելիին, որ սա ստիպված է լինում դուրս անել դերասանին իր տանից:

Օրիորդը դիմում է հօրը, խնդրելով շու-
տով կանչել սեր Ֆրէդերիկին, որին հայրը կամենում էր տալ իր աղջկան և որին Լելին չէր սիրում: Օրիորդը ցանկանում է անյայտաղ նրա հետ ամուսնանալ: Այդ յիմար հարու-
տը պատմում է աղջկան, թէ լսել է Սիւլի-
վանից, որ նա մի պարոնի աղջկան դէպի ինքը ունեցած սիրուց բժշկելու համար իրան անբարոյական է ներկայացրել աղջկոյ առաջ, որին ինքն էլ սիրում է եղել: Նրբ այդ պատ-
մութիւնը լսողներից մէկը հօրն էլ և աղջ-
կան էլ յիմար է անուանում, Սիւլիվանը նրան մենամարտութեան է հրահրում:

Լելին ամեն բան հասկանում է. նա առանց մտածելու գնում է դերասանի տունը, որտեղ գալիս է և իր հայրը, համոզելով հօրը գնալ իր հետ, բայց չը կամենալով հօրը հնազանդվել և հեռանալ դերասանի տանից, հօր անէծքը ստանում է: Նրբ Սիւլիվանը վերադառնում է մենամարտութենից, աղջիկը պատմում է, որ նրանից աւելի ուրիշ պաշտ-
պան չունի: Սիւլիվանը համոզում է օրիոր-
դին վերադառնալ հօր տունը, որտեղ ծերուն-
նի հայրը նրան բաց գրկով կընդունի: Լորդ Հաստինգ, որ դերասանի սենեակում թաքն-
ված էր, նկատելով Սիւլիվանի ա գնիւ վար-
մունքը, օրհնում է երկուստսարդներին, իսկ յիմարացած Ֆրէդերիկին մնում է երկուստ-
սարդների խաչկըբայրը դառնալ:

Խաղի ամբողջութիւնը առհասարակ շատ լաւ էր:

Օր. Վ. Պաշայեանի խաղը, եթէ համեմա-
տենք նրա առաջին և երկրորդ խաղերի հետ «Աշնանային երեկոյ» պիեսայի մէջ, կարող է թոյլ երևալ: Նատերից մենք թատրոնում այն կարծիքն էինք լսում, որ օրիորդը չարդարաց-
րեց այն յոյսերը, որ նրա վրա դնում էին: Այդ կարծիքի հետ մենք չենք կարող համա-
ձայնել: Լելիի դերը այնպիսի դերերից է, որը զիւսուորապէս արհեստական խաղ է պահանջում և ոչ թէ տաղանդ: Մի անհորձ օրիորդ, թէպէտ և տաղանդաւոր, որ բեմի հետ այնքան է ծանօթ, որ նրա վրա երկ-
րորդ անգամ է գտնվում, օր. Վ. Պաշայեանից աւելի լաւ Լելիի դերը կատարել չէր կարող: Մենք օրիորդի վրա նայում ենք ոչ թէ իբրեւ դերասանուհու, այլ իբրեւ թատրոնասիրուհու վրա, բայց եթէ նա մինչև անգամ սկսող դե-
րասանուհի լինէր և երկրորդ անգամ բեմ դուրս գար այդպիսի դերի մէջ, մենք նրա նից աւելի լաւ խաղ չէինք կարող պահան-
ջել: Սեր նախկին յօդուածում ասել ենք և դարձեալ յայտնում ենք այն ցանկութիւնը, որ օր. Վ. Պաշայեան պարապէր թատրոնում, ծանօթանալ բեմական արհեստի հետ: Մենք հաւատացած ենք, որ նա մի քանի ժամանա-
կից յետոյ կարող է հայկական բեմի զարդը լինել: Վատ չէր լինի եթէ օրիորդը փորձէր իր ոյժերը «Թուղթ խաղացողի կեանքի» մէջ, Ամալիայի դերում:

Պ. Վ. Մամիկոնեանը լաւ կատարեց Սիւ-
լիվանի դերը: Մանաւանդ նա լաւ էր

երկրորդ գործողութեան մէջ, երբ նա պատահաբար տեսնեց իր անհայտ զգացմունքները հետ: Սթէ պարտնք մի փոքր խնայել իր կուրծքը և ձայնին շատ ազատութիւն չը տար, մենք նրա խաղի մէջ առանձին պահանջներ չէինք դնել:

Պ. Ն. Միրզոյեանը կատարելապէս տիրապետում էր իր դերը: Առանձին ուշադրութեան արժանի էր նրա խաղը, երբ նա ներկայացնում էր իր աղջկան չափազանց սիրող նրա կապրիզները կատարող ծերունի և խորամանկ հօրը և հպարտ, ինքնասէր արիւնքաւոր: Պ. Միրզոյեանը շատ լաւ էր նոյն պէս, երբ մի յայտնի դերութիւնը դէպի միւսն էր անցնում: Օրինակ, երբ նա նախապաշարված լուր էր Սիւլիկանի խօսքերը այս վերջինի տան մէջ, նրա վրա լիբել յափշտակող վրայ է նայում և յետոյ համոզվում է, որ դերասանը նոյնպէս կարող է ազնիւ մարդ լինել:

Սթէ և նախապաշարված պիւսան մենք շատ անգամ տեսել ենք, բայց երբէք մեզ չէ պատահել տեսնել իւրիւր և լորջ հատկութիւնները այդքան լաւ կատարված, ինչպէս կատարեցին օր. Պաշայեան և պ. Ն. Միրզոյեան:

Ճաւում ենք, որ նոյնը չենք կարող տեսնել Ս. Պետրոսեանի մասին: Սովորականին հակառակ այս անգամ պարտնքն չը յաջողեց Ֆատի դերը կատարել: Սիր Ֆրէդէրիկը մի հարուստ մօղային հետեւող, սիրականներ ունեցող պարզամիտ և բարի յիմար է: Փոխանակ այդպիսի մի անձնաւորութիւն ներկայացնելու, պարտնք մի ծառայի դեր էր կատարում: Մասնաւոր պատճառներ հարուստը վատ էր: Այս վերջին պատկերացումը նա ունենում է բոլոր խաղերի ժամանակ:

Առօրինակ այս անգամ աւելի լաւ գնաց, քան թէ առաջին անգամ: Օր. Պաշայեան և Ս. Պետրոսեան Աշնանային երեկոյի մէջ անհման էին:

Պ. Ալեքսանտրեանը լաւ կարգաց Գամառ-Բաթիպայի և Բաթիպի բանաստեղծութիւնները: Պարտնքը շատ ծախսահարութիւններ անցաւ: Պ. Սուքիասեանը Թիլիլիսի բարբառով մի պատկեր կարգաց: Պարտնքի ընթերցանութիւնը վատ չէր, թէպէտ գրուածը չափազանց աղքատ էր բովանդակութեան կողմից: Կանանց հագուստների երկար պոչերը և քակու այն մեծ տոնարանները, որոնց շալակներով տանում են մեր երիտասարդները ամուսնանալու ժամանակ, ահա դրուածքի բովանդակութիւնը: Ինքն Նոր-Նորը պարտնք ունէր աղանջներ, բայց այդ նրան չէ աջակցում:

Այդ ներկայացման մասին այսքան բաւական է:

Մասնաւոր կերպով լուր էր, որ ուսաց խումբի դերասան պ. Չերնով ամեն կերպ օգնել է սիրողների ներկայացմանը: Չէ կարելի պատուելի պարտնքն շնորհակալութիւն չը յայտնել դէպի հայոց Թատրոնը ունեցած համակրութեան համար:

Գ. Տ. Գ.

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ

Առաջին յօդուածում մի ուսուցչի հետ ընթերցողներին ծանօթացնելով, նպատակ էր ներկայացնել մեր հոգեւոր դպրոցի այն զեղծումները, որոնք կատարելաբար խոչընդոտներ են դարձել ներկայումս դատարարութեան վրան գործին, և որոնք յառաջանել են մի քանի ուսուցչների գողոց և խտրական ընտելութիւններից: Բայց յօդուածն երկարեւոր պատճառով, խոստացել էի մի ուրիշ անգամ գրել այս ամենահարկաւոր աւարկային մասին:

Ուսուցչների խարդախ գործողութիւնները վաղուց հրապարակ էր շատերի ուշադրութիւնը, գրեթե էին շատերի հետաքրքրութիւնը. և իմ մէջ ներշնչել մի անդրդիւր մտադրութիւն, անշուշտ հարուստի գեղեցիկ տեսնողագործող պարտնք:

Բնութեան վերջին միջոցներում լայն են ընկնում այնպիսի անապատի շարժանքներ, որոնք աւելի և աւելի ստիպողական դարձնելով պահանջը, հարկադրում են ինձ այսօր կատարել խոստումը:

Մօտ օրերումս մի այնպիսի տխուր կոմիդիա է խաղացվում մեր հոգեւոր դպրոցում, որ ոչ մի բանիմաց քաղաքացի անկարող է անտարբեր աչքով նայել այս խաղի վրա: Ուսուցիչները, այդ նուիրական սրբաբարձը նոյն իսկ ուսուցչները (բացառութիւններ կան) կրքերի ասպարէզ է դարձել:

Արդէն յայտնի է ամենին, որ մեր ուսուցչական խմբի մէջ կայ կատարելաբար երկպառակութիւն, որ ամենը նրանցից կամենում են անպատճառ իշխել, իսկ ոմանք չը հնազանդվել: Որ ասուէ չը լինելու պատճառով տիրում է նրանց մէջ ետականութիւն, առանձնապիւսութիւն և այդ մի և նոյն է թէ անդիլութիւն: Որ, նրանցից բարձր ուսում ստացողները յառաջ են բերում իրանց առաւելութիւնը, ստորակարգ ուսուցիչները կամենում են, պահանջում են ունենալ և իրանց նշանակութիւնը ուսուցիչական: Իսկ մի քանի ինտրիգաւոր պարտնքներ իրանց թիկունք ունենալով միակնանկների փառաբանութիւնը, ամենը ենք, մենք բացականչում են, —մեր այսին, այս պիտի լինի ոչ ոչ:—Հոգաբարձութիւնը կարծես անգոր է անհասարկու ինքնակու տեսչների կառավարչական փափաղը: Եւ վերջապէս երեք ուսուցչների պաշտօնից հրաժարելու վերջ են դնում առայժմ բարեբն:

Երեք ուսուցչների հրաժարական տալը մի այնպիսի անցք է, որի մօտից չենք կարող անցկենալ անտարբեր կերպով. հոգաբարձութիւնը չը հրաժարեց նրանց պաշտօնից և ոչ մի առանձին եկամուտի աղբիւր գտան նրանք որ աւելորդ համարէին շարունակել ուսուցչութիւնը: Ի՞նչ քան ուրեմն հարկադրող դրանց դիմել մի այդպիսի միջոցի: Սրա և առհասարակ բոլոր անկարգութեանց իսկական պատճառը բացատրելու համար, հարկաւոր է ինձ դիմել մի անհրաժեշտ նկարագրութեան, որի վրա հրաւիրում ենք ընթերցողը ուշադրութիւնը:

Մեր հոգեւոր դպրոցի ուսուցչներից յայտնի անձնաւորութիւնը արտից մի քանի տարի առաջ զանազան խաղերով միջոցներով դուրս պրծնելով մի խիստ մանկավարժական դիւրեկլիսնա պահպանող տեսչի իշխանութեան տակից, ձեռք բերին առանձնապիւսութիւն. և այն օրից սկսեալ մինչև հիմա, այս մի քանի տարիների ընթացքում, միշտ եղել են անպատասխանատու իրանց պաշտօնական պարտութեանց մէջ: Այս անդիլութեան ժամանակամիջոցում արանց միակ քաղաքականութիւնը եղել է, —վարկը ամառ մուծող ուսուցչների հետ արհամարհական կերպով, նայելով նրանց վրա ուղիղակի բարձրութիւնից: Իսկ իրանցից բարձր ուսում ստացողների հետ նրանք մի առանձին երկապի ընթացք են բռնել: Օրինակ հոգաբարձութիւնը հրաւիրում է ուսուցչական մի բարձր ուսում աւարտած պարտնքի ուսուցչի պաշտօնով: Ակզբում պարտնքները գործ են դնում իրանց քաղաքականութեան բոլոր հնարքները, թափում են իրանց բոլոր ձեռք անոր ուսուցչին իրանց աղեկեղծութեան ենթարկելու, և ապա կամաց կամաց նրանց գործիք պատրաստելու դիտաւորութեամբ: Եթէ այս աջողեցաւ, լաւ, —սրբաւարկները խաղաղ են, եթէ ոչ, —սրբաւարկները դառնում են երկպառակութեան ասպարէզ, ինչպէս ապացուցել են մեզ այդ քանիցս անգամ փորձերը: Պարտնքներ իսկոյն փոխում են վարկողութեան ձեռք: Մէկ կողմից իրանք, միւս կողմից իրանց արքանականները սկսում են լուր տարածել, հրատարակել ամեն տեղ, թէ ճորտերը լաւ դատաւոր չէ:—Ի՞նչ անենք, որ բարձրագոյն ուսումնարան է աւարտել նա: Գաւառական կանոնները կոչելու չը գիտէ, մանկավարժական կանոններն տեղեկ չէ, և այլն և այլն... նրանք անքան բաներ են հնարում, որ ի վերջոյ կարողանում են համոզել թէ ճորտ ուսուցիչը վատը լաւի տեղ, մեր սպիտակի տեղ ցուց տալու, աչքակապութեան արհեստին տեղեկ չէ:

Գուրբը նրա վարկը ընկաւ, արձաւ. նրանք ներսը: Բայց ոչինչ: Սրա համար էլ նախապատրաստված են մեր միտորները:

Գառալ է գալիս հարուստիական դերը: Այսուհետ են նրա չորս կողմից անքան փորել, մինչև որ նա ինքը յօժար կալելով փայլէր արքայազններից:

Եւ ճշմարիտն ասած, մինչև այսօր միշտ աղողել է նրանց ճարպիկ կերպով խաղաղ իրանց դերերը: Հանգամանքների այս օրինակ կարգաւորութեան ժամանակ յանկարծ երևում է «Մշակի» 33 համարում * ստորագրութեամբ, առաջին անգամ ուսուցչականների թերութիւնները և ուսուցչների պակասութիւնները նկատողութեան ենթարկող մի

յօդուած: Երևակայեցէք հիմա, ընթերցող, մեր երևելի պետագործների զայրոյթը:—Ո՞վ է դա, որ յանդիման է դիպչել մեր անապատականութեանը, որոտում է ինքնակիրթը: Եփօթ, փոխադարձ կասկած, վրդով տիրապետում են նրանց վրա: Հաւաքվում են բոլոր ուսուցչները, կազմվում է ժողով: Խորհում, խօսում, վիճաբանում են այդ անապատելի յօդուածի վրա և վերջապէս հասնում են այն եզրակացութեանը, որ իրանցից մէկին անուանում են այդ յօդուածի հեղինակ: Ամբաստանվածը հերքում է այդ, որպէս մի անհիմն կասկած: Ամբաստանողները պնդում են. վիճաբանող կողմերը տաքանում են հետզհետէ և աւագ ուսուցչներից մէկը դուրս թուելով համատեղեան սահմանից ձգում է թանաքամանը ամբաստանվածի երեսին հանդերձ անպիտան խօսքերով: Կեցցէ մեր երևելի դատարարը:

Ամբաստանվածի երկու ընկերները տեսնելով այս լօթիական վարմունքը պաշտպանում են իրանց ընկերի պատիւը, պահանջելով պարտ ու պատշաճ անօրէնութիւն:

Նրանց խօսքերը մնում են «Չայն բարբառոյ յանապատի»:

Մի քանի օրից յետոյ, չը նայելով որ մի միջնորդ աշխատում էր հաշտեցնել թշնամական կողմերը, երեք ուսուցչներն էլ տուին հրաժարական, յայտնելով որ չեն կարող լինել ճարտուղ ուսուցչներ:

Չարմաք բան, զիւրապարհները հեռացան, որպէս կարծում էին և ուրիշներն էլ այդպէս հասկացնում էին մի քանիսները, բայց խառնութիւնը դեռ ևս շարունակվում է: Ինչո՞ւ:

Որովհետև «գիւղացիները» իրանց հաշիւը միայն ամառ, մուծող ուսուցչների հետ վերջացրին, իսկ մի բարձր ուսում աւարտածի հետ դեռ ևս չեն զրտվել:

Ցանկանում եմ խաղաղ վախճան: Բայց սրանց ինտրիգները միջոց սահմանափակվում են միայն ուսուցչական չորս պատերի մէջ:—Առաւարկչական ճաշակը այն աստիճան է զարգացել մեր ուսուցչների մէջ, որ այս վերջին տարիներում նրանցից լուրջանները և լուրջախիղները քաղաքագլուխներ են դարձել մեր գլխին: Անցեալ տարվայ պատգամաւորաց և զանազան ժամանակներում կազմված մեր քաղաքական ժողովները զորաւոր ապացոյցներ կարող են լինել աստիճան: Պարտնքներ չը գիտեն ինչ կրաւոր մասնակցում են այդ ժողովներին: Հարցնում ենք: Հասարակութիւնը հաւաքվում է իր համար պատգամաւորներ, հոգաբարձուք ընտրելու կամ մի ուրիշ կարգաւորութեան համար, —դուք ինչի համար էք խառնվում նրա տնային գործերի մէջ: Չեն պարտաւորութիւններ է, պարտնք, իմանալ թէ ուղեք են ընտրված, և ոչ թէ ինչպիսիներ կարկառու է ընտրվել: Չը կայ արդե՞ք մի դրդիչ պատճառ, որ դուք ներս էք ընկնում մեր ժողովներում: Իսկ նիստը սկսվելուց յառաջ փոխում է քրա և նրա ականջին երևի ձեռ նախապի համար գործիքներ պատրաստելու: Գուցէ սկսվում եմ:

Թող չը կարծեն վտանգաւոր և ստորաբարձ մարդիկ, որոնք չըլուծ են փողոց փողոց, տնէ, տուն և կրպակէ կրպակ անմեղ նպատակալարմար անձինք որսալու, թէ այս տողերը գրում եմ մի որ և իցէ կողմնակի ազդեցութիւնից թեւադրված:

Այս ամեն անամօթութիւնները կատարում է ք մի և նոյն միջոցին զարմանում էք թէ ինչո՞ւ համար կոչ են բոլոր հասարակութիւնը, և կան նրա մէջ դիտող աչքեր, և կան գրող ձեռքեր:

Եթէ հարկաւոր են ձեռք միայն լաւ կողմեր տեսնողներ, բաւականացէք ներկայ բարեկամաց թւով, եթէ բարեկամներ են միայն լաւ կողմեր տեսնողներ, բայց ինձ կը մնայ միշտ յառաջագիւղութեան գործին խոչընդոտներ պատճառող անձնաւորութեանց գործողութիւնները հարուստեղ, որովհետեւ ձեռք վրա են նայում եմ որպէս մեր հոգեւոր դպրոցի ուսուցչների վրա, իսկ ինձ վրա որպէս մի քաղաքացու, որի սեպուհ պարտաւորութիւնն է իմանալ թէ ինչ անցքեր են պատահում ուսուցչականում, և այդ պարտքը դնում է ամենայն մի քաղաքացու վրա նոյն իսկ ուսումնարանը:

Արիւնքից

ՆԱՄԱԿ ԹԷԼԱԽԻՑ

12 մայիսի

«Մշակի» 65 համարում պ. Կախեթեցին Թէլախի վերաբերութեամբ քանի մի բան է գրել: Ի միջի այլոց նա վերաբերական բառերով դիպչում է Թէլախի երկսեռ ուսումնարանաց մէջ գործող անձանցը ընդհանրապէս, իսկ պ. Գ. Սարգսեանցին մասնաւորապէս, որոց մասին պարտաւորութիւն եմ համարում ինձ ասել քանի մի խօսք:

Գրութիւնը աննպատակ չէր, բայց և այդպիսի մի դրամա յօդուած նամակագրին պատիւ չէ կարող բերել: Նա նկատում է, որ Թէլախի հայ քահանայք տղէտ են և անարժան իրենց կոչման: Այդ մեզ չէ վերաբերում. առաւին ասում է. «այժմ իր ոտովը կը կախվի, ոչխարն իր»: Ցաւելով եմ ասում, որ իրաւ է, և թէ այստեղ քահանայից կուսակցութիւնը ծայրաբեղութեան հասնելով, բնականաբար և հասարակական գործերը մասամբ վերաւորում են:

Իսկ մեր վերաբերութեամբ կասեմ.

Նախ հարցանենք պ. Կախեթեցուն. որ ժամացոյցով է դիտել նա, որ մեղանում ժամը 11-ին են ժողովվում աշակերտները, հետեաբար և դասերն սկսվում են. երթալան թէ տաճկական: Բայց եթէ, ասածը, երթալան ժամացոյցի հաշուով կինի, ուրեմն պիտի վերջանան մեր դասերը ժամը 5-ին, զինի կէս աւուր, վասն զի, օրական 5 դաս է աւանդվում, մի մի ժամով իւրաքանչիւրը, մի ժամ էլ չորս դասափոխութեանց միջոցներին է նուիրված: Ինչպէս ընդունված է ամենուրեք դասերը սկսվում են, աշանք և ձմեռը, ժամը 8-ին առաւօտին, իսկ ապրիլից սկսած ժամը 7-ին, հետեաբար և աւարտվում են իրանց ժամանակին: Կասական ցուցակները պարզ ապացոյց են ասածին:

Գրում է պ. Կախեթեցին, «մեծ պատի ամեն շարաթ օրը աշակերտները գտնվում էին եկեղեցում. ուրեմն այդ օրը նրանց համար դաս չը կար» Եթէ ճշմարիտ լինէր այդ լուրը, մի շաշափելի վնաս չէր լինի օրերորայ ասման յառաջագիւղութեան մէջ. բայց ցուցակով ասում եմ, սա ևս ճշմարտութիւնից շատ հեռու է: Աշակերտութիւն մեծ պատի ընթացքում երեք անգամ միայն կիրակի պատարագին ներկայ գտնվեցան, իսկ մեծ պատի չորրորդ շարաթ օրը, թաւառան մասնական տնին երկսեռ ուսանողը ճաշակեցան, ըստ սովորութեան տեղին, որով երկու օր միայն ճաշակ ժամերգութիւններին ներկայ գտնվեցան, թէ տղայք և թէ աղջկեք և ոչ ամեն շարաթ օր:

Անհրաժեշտ ըմբռնողութեամբ յարձակվում է պ. Կախեթեցին իմ պատմականից պ. Գ. Սարգսեանցի վրա իր թէ. «պատերի ժամանակ պարապում է փառաբանութեամբ, գիւղացիներին համար խոսքերը գրելով»: Այս ևս հիմնովին սխալ է: Պարտնք ասեմ, այդ լուրը անմասնաւոր թշնամութեան ծնունդ է, որ դժբաղդաբար յաճախ է պատահում Թէլախում, զանազան գոյներով և տեսակներով ամենամօտ բարեկամների մէջ անգամ: Շատ ծիծաղելի է պ. Կախեթեցու այն եղբակացութիւնը թէ վաւիլաբարութեան և նոսալի ուսուցիչը տեղափոխված է Ղաթալի, ուրեմն դպրոցներում ոչինչ չէ չլինում: Եթե թաղելի է ասացի, որովհետև նոսալի և հ. վաւիլաբարութեան ուսուցիչը երկսեռ ուսումնարաններում միասին ունի շարաթական 10 դաս: Երկու ուսումնարաններում աւանդվում են շարաթական 60 դաս, եթէ 10 դաս դիցուք թէ պարապ են անցնում, չէ նշանակում որ մնացեալ 50 դասերն էլ պարապ են անցնում: Իրաւ է, նոսալի և հ. վաւիլաբարութեան քահանայ ուսուցիչը, չնորհիւ կուսակցութեան (դարձեալ քահանայական) տեղափոխված է ժամանակաւորապէս Ղաթալի, բայց ոչ մի դաս պարապ չեն անցկացրել ոչ օրերորդ և ոչ տղայք. ես և պաշտօնակիցներս զոհեկ ենք մեր աշխատութիւնը յօդուած այդ անմեղ ուսանողներին, ուսուցչի բացակայութեան միջոցին, որ սկսվել է ապրիլի 13-ից:

Թէլախի երկսեռ ուսումնարանների հոգաբարձուց մասին էլ չէ մոռացել պ. Կախեթեցին իր քանի յարմար վայր ի վերջ բաներ գրել երկսեռական դատողութեամբ: Պ. պ. հոգաբարձուք գործում են որքան կարողանում են: Վիճակաւոր սրբապան առաջնորդը, պ. Թեմակոս վերադասուցչը և Թէլախի պատուական հասարակութիւնը գործ են նրանց գործերից և մի քանի անգամ յայտնել են նոցա հրապարակաւ իրանց շնորհակալութիւնը: Թէ ինչպէս է համարվում հասարակութիւնը ուսումնարաններին երևում է նրանց, որ ուսանում են այժմ 51 օրերորդներ և մինչև 100 տղայք: Այս գումարն առաջին երեկոյին է Թէլախի հայ ուսումնարանների համար, նոցա հիմնված օրից:

Ն. Սիւլեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երկուշաբթի, մայիսի 21-ին տօնի պատճառով տաղարանում չեն բանում և այդ պատճառով մասիս 22-ի, երեքշաբթի «Մշակի» համարը չեն կարող հրատարակել:

Մեզ գրում են Թէլախից: «Ապրիլի 20-ից սկսած Թէլախում և Ղաթալիում գրիթէ ամեն օր անձ:

ըն է գալիս Եղանակը շատ զով է: Կենսական պի-
տոյքները փոքր ինչ է Եղանակը: Արտերը լա-
հունք են խոտոտում, խաղողը և ծառապտուղը
տուտ է երևում: Թէպէտ 30 միստ հեռաւո-
րութեամբ, Արազան գետի ձախ կողմը մոտեն է
երեւելը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌԱՐՈՒՆԻՅԱՐԻԱ

Նախօրէն առաջինը որ նուաճեց, եւրո-
պայի կէսը, այնքան էր պարծնում իր աճու-
ղութիւններով, ինչքան աւստրիացիները պար-
ծնում էին իրանց քաղաքներով, երբ նրանց
Հարիւր Հազար մարդկերանցից բաղկացած
զօրքերը յաղթեցին Բոսնիայի և Հերցեգովի-
նիայի երեք կամ չորս Հազար կիսով չափ
զինուորով, առաջնորդներ և օգնիչներ
չունեցող, զինուորական կազմակերպութեան
գործի, զրջրտուած մահմետական ապստամբ-
ներին: Աւստրիական զինամասերը և ուն-
գարները պատերազմական անշունչ աճողու-
թեանց ոգևորված իրանց յաղթողներ էին
յամարում և Հպարտանում էին մտածելով,
որ նոքա նուաճեցին Բոսնիա և Հերցեգովինա:
Հրատարակում է Աւստրո-թիւրքաց դաշնադ-
րութիւնը յիշեալ երկու նահանգների մասին
և դրանով քանդում են աւստրիացիների բո-
լոր երեւակայական ամրոցները:

Աւստրո-թիւրքաց դաշնադրութեան Հրա-
տարակը մի Հարուած էր աւստրիական ազ-
գասէրների ինքնասիրութեան համար: Այն
մարդիկ, այն զինամասերը, որոնք մի քա-
նի ժամանակ առաջ պարծնում էին Բոս-
նիայում և Հերցեգովինայում իրանց ունեցած
յաղթութիւններով, այն մարդիկ որոնք եր-
կիւք էին Հասցնում կոմս Անդրաշի արեւե-
լեան քաղաքականութիւնը, յանկարծ նկա-
տում են, որ իրանց զօրքերի յաղթութիւն-
ները և իրանց միւնիստրութեան դոված քա-
ղաքականութիւնը ծառայել են ոչ թէ աւա-
տրո-ուստրիական պետական շահերին, այլ
թիւրքիայի օգուտներին: Նոքա նկատեցին, որ
իրանց միւնիստրութիւնը և զօրքերը աճողու-
թիւն ունեցան միայն նրա համար, որ նորին
մեծութեան թիւրքաց սուլթանի կառավա-
րիչներ և Հարկատուներ գտնան, որ թիւր-
քաց վատ կառավարութեանց քայքայված նրա
կառավարները լաւացնեն իրանց սեփական
հաշուով: Նաո գեղեցիկ աճողութիւն: Դրա-
նով պարծնելու կարելի է: Այդ է պատճառը,
որ աւստրիական զինամասերը այլ ևս չեն
ծիծաղում և Հպարտանում: Նրանք վերադա-
նեն, որովհետեւ անկերե տեսնում են, որ Աւս-
տրիան յիմարացած է, նա զոհված է ուն-
գարական ցանկութիւններին:

Աւստրո-թիւրքաց դաշնադրութիւնը աւ-
բող պետութեան մէջ այնպիսի զայրոյթ և
անբաւականութիւն է բարձրացրել, որ մինչև
անգամ կոմս Անդրաշի ամենահաւատարմ
կուսակիցները, նրա քաղաքականութեան ա-
մենաջերմ պաշտպանները չը գիտեն ինչ սակն
և ինչպէս պաշտպանեն իրանց կուսակցու-
թեան առաջնորդին:

Մինչև անգամ աւստրիական ազգային ժո-
ղով մէջ ամենեւ յայտնվեցաւ այդ անբաւա-
կանութիւնը: Կոմս Վիլհելմ, որ թէ առաջ
և թէ այժմ կոմս Անդրաշի արեւելեան քա-
ղաքականութեան ջերմ պաշտպան է համար-
վում, այնպիսի մի պախարակող ձևով ասաց
աւստրո-թիւրքաց դաշնադրութեան վերաբե-
րութեամբ, որ լողներ լիքա սարսափելի տը-
պաւորութիւն գործեց: Նոյնը պատահեց և
Բէյրութում: Այդտեղ էլ դաշնադրութեան
պախարակողները կոմս Անդրաշի կուսակիցներն
են եղել: Կարելի է համարձակ ասել, որ աւա-
տրիական առաջին միւնիստրի բարեկամների
թիւր միջ այն աստիճան նուազել է, որ
նրանց մասներով կարելի է Հաշվել:

Բոլոր լրագիրները պախարակում են դաշ-
նադրութիւնը, իսկ պաշտօնական հրատա-
րակութիւններից միայն մի քանիսը «Frem-
denblatt» և «Polit. Corresp.» շատ թոյլ կերպով
պաշտպանում են առաջին միւնիստրի քաղա-
քականութիւնը:

Եւրոպական լրագիրները քննելով Աւստրո-
թիւրքաց յիշեալ դաշնադրութիւնը այն
եղբակցութեան են հասնում, որ դաշնա-
դրութիւնը ոչինչ նորութիւն չէ ներկայաց-
նում, որ դա ծագել է այն միայն քաղաքակա-
նութեանց, որին հետեւում էր կոմս Անդրաշի
Բերլինի կոնգրէսի ժամանակ:

ՅԲԱՆՍԻԱ

Յրանխական երկու ժողովներ են, որոնք
զատիկ տօների արձակուրդների և գլխաւոր
խորհրդարանների ընդհատման պատճառով
դադարել էին, նորից սկսեցին իրանց նիստե-
րը: մայիսի 15-ին երկու ժողովներ էլ գու-
մարվեցան Վէրայի: Զը նայելով որ այդ օրը
ոչ մի հարց չը կար վճռելու, որովհետեւ այդ
օրը պէտք է որոշվէր միայն հարցերի վիճա-
բանութեան օրակարգը, բայց և այնպէս ժո-
ղովրդանի բոլոր դահլիճները, սրահներն ու
բոլոր անցքերը բազմութեան ահագին խի-
տութեանց անանցելի էին դարձել: Այս ան-
գամ ժողովի պատգամաւորները որոշեցին ա-
մենից առաջ վիճել գլխաւոր զօրավարների
հարցի մասին, որը առանց այն էլ այնքան
ուշացել է, և որի մասին էլ սենատը վիճա-
բանութիւններ է ունեցել: Նոր ընտրված
պատգամաւորները իրանց մէջ զանազան հար-
ցերի վերաբերութեամբ տաք-տաք են խօսում:
Այդ խօսակցութեանց զանազան կարծիքներ
են առաջանում: Ընդհանրապէս կարելի է աս-
ել, որ այդ խօսակցութիւնները անբաւա-
կանութեան արտայայտութիւններ են: Դրա-
խաւոր զօրավարների հարցից յետոյ, գալիս է
Բլանկիէի հարցը, որը դեռ վիճաբանութեան
առարկայ է, և որի մասին կարելի է հասա-
տի լինել, որ մեծամասնութիւնը նրան չի
ընդունել: Բայց ձախակողմանները սրա մա-
սին սաստիկ բարկացած են կառավարութեան
դէմ, որովհետեւ, ասում են նրանք, եթէ կա-
ռավարութիւնը կամենար, նա կարող էր թո-
ղութեան խնդրին մի այնպիսի ձև տալ, ու-
րից յետոյ էլ այնպիսի հարցեր չէին առաջա-
նայ, բայց մի անգամ, որ սխալ կատարված
է, պէտք է հնազանդել նրա հետեւանք-
ներին:

Հանրապետութեան թշնամիները բողբոջում
են, որ կառավարութիւնը չէ կառավարում,
բայց և այնպէս, ինչքան որ այս բողբոջը ընդ-
հանուր լինի, այնու ամենայնիւ սա մի այն-
պիսի չափազանց կէտի չէ հասել, որ սրա-
նից խռովութիւններ առաջանային, և բոլոր
անբաւականներն էլ զինված մի երկարատե-
համբերութեամբ սպասում են գործի վախ-
ձանին:

Կառավարութեան ընդհանուր քաղաքակա-
նութեան մասին դեռ ոչինչ հարց չէ դա-
րձած, բայց «Rappel» լրագրի խօսքերին նա-
յիւրով, պ. Լօկուա դրա մասին շուտով մի
առաջարկութիւն կը կազմի:

Կերականները ոչ մի միջոց չեն կորցնում
առանց մի որ և է օգուտ քաղելու: Նրանք
շատ անհամբար մարդիկ են, նրանք ամեն
գիպուկացի էլ օգուտ են քաղում: Մի քանի
միապետական թերթեր ասում են, որ Փարի-
զի արքեպիսկոպոսը նորերումս Փարիզի թեմի
քրիստոնէական ուսումնարանների ժողովը ա-
նուով մի ժողով հիմնեց, որի նախագահու-
թիւնը յանձնվեցաւ պ. Նէնրլօնին, որը նա-
խագահում է նոյնպէս և մի քանի ուրիշ կա-
թօլիկական ժողովներին: Պ. Նէնրլօն այդ ժո-
ղովներից մէկում յայտնեց, որ քաղաքային
խորհրդարանի տարրական ուսումնարանների
վերաբերութեամբ կազմված ծրագիրը, որը
ներկայացրած է ժողովրդական լուսաւորութեան

միւնիստրին և որը հաւանութիւն գտնելով
միւնիստրութեան կողմից, հրամայված է շուտով
փոփոխութեան ենթարկել կաթօլիկական ու-
սումնարանների դաստիարակներին: Մրանից
յետոյ պ. Նէնրլօն աւելացրեց, «ուրեմն այսօր
կամ վաղը մենք կը տեսնենք, որ մեր աչքի
առաջ դասի ժամանակ օտար մարդիկ կը
մտնեն մեր երեխաների ուսումնարանները, և
կը հրամայեն ուսուցչին, որ դուրս գնայ, ու-
րեմն պէտք է մենք ամեն միջոց ի գործ դը-
նենք և այդ անպատուութեան չարիքի առաջ
առնենք, եթէ ոչ, լաւ իմացէք, որ ուսումն-
արանների կորցնելուց յետոյ, մենք կորցնում
ենք ամեն բան»:

Այս խօսքերից յետոյ պ. Նէնրլօն առա-
ջարկեց հիմնել մի բոլորովին անկախ ուսումն-
արան, որի մէջ կը ներդրվին բոլոր այն ու-
սուցիչները, որոնց քաղաքային խորհրդարանը
կարձակէ անարդար պատճառներով: Յպիսկո-
պոսը այս վերջին խօսքերին մեծ համակրանք
ցոյց տուեց, և ընդհանուր ժողովի համա-
ձայնութեամբ վճռեցին ստորագրութիւն բաց
անել այս նոր ողորմանքութեան գործի հա-
մար...

Ասում են, որ այդ ժողովի անդամների մէջ
շատ նշանաւոր մարդիկ կան ինչպէս օրինակ
պ. պ. Բուլլի, որ նախկին միւնիստր էր, Բա-
վիլեան որ սէնատոր էր, և մի քանի ուրիշ
այսպիսի մարդիկ:

Միւնիստրները դամարվեցան արտաքին գոր-
ծերի միւնիստրութեան դահլիճը: Բաւական
հաստատ արդիւրներից երեւում է, որ նրանց
մէջ ոչինչ այնպէս առանձին տահաւորութիւն-
ներ չեն պատահել, որոնց մասին մի քանի օր
առաջ կարելի էր անդամների մէջ այնչափ
սարսափելի վէճեր էին ծագել:

ՄԱՆԿՈՒՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՊԱՏԱՍԻԱՆԸ

Կ. Պօլի «Մասիս» լրագիրը մի քանի շատ
իրաւացի նկատողութիւններ էր արել Ման-
կունի եպիսկոպոսի մասին, որին յիշեալ եպիս-
կոպոսը հետեւեալ յանդուգն պատասխանն է
տուել, տպելով նրան ձեռագիր մէջ:

Ձեր երեկուան 960 թուոյն խմբագրական
յօդուածէն իմացայ «Մասիս» լրագրոյ նորա-
հնար մի սուտ ևս քաղած և հրատարա-
կուած լինելը, իբր զի ես Պատրիարքութեան
թիւնը (?) ձեռք բերելոյ համար մի ծ-
կակ դուժմար մը բերած լինիմ, և այլն
և այլն:

Յանչափա գոհ եմք և պիտի լինիմք ցոր-
չափ որ «Մասիս» լրագրոյ մէջ գովուելոյ դժ-
բաղութիւնը չեմք ունենար, վասն զի աւե-
լի կարեւորութիւն և նշանակութիւն չեմք
տուած նորա և նմանեցն հրատարակած ա-
պերասան և բոլորովին անխիղճ զրպարտու-
թեանց միանգամայն պաշաւոր ստույթեանց
յորոց մին պիտի համարուի «Պատրիարքու-
թեան նիւտելով մեծկակ գումար մը» բերած
լինելս: Գուցէ այս համբաւ կամ համոզումը
հրապարած է զազնիւ խմբագիրն «Մասիսի»
դժեմ. Կ. Ս. Իվթիւճեան» որ յանուն Վեհ-
Հայրապետի ամենայն Հայոց զրկուած լրագրաց
ներկայ 1879 տարւոյ բաժանորդագիրը ինքն
ևս ստացած և անդորրագիրը ինձ փոխանա-
կուած լինելով ի ձեռն զիրս ձեռնեակ վար-
դապետի Դիմաքեան, այս օրերս մի ընկալա-
գիր ևս զրկած է ինձ և մի և նոյն հաշուով
կրկին բաժանորդագիրը կուզէ: Մի գուցէ շատ
զբաղմունք ունենալով և ծեր լինելով սխա-
լուած է, այդ սխալական մարդ է:

Մեծ խմբագրապետ, այս առիթով գուցէ
աւելորդ չէ յաւելուլ, զի մի փոքրիկ կու-
սակցութիւն և մի քանի լրագրեր կան որոց
մէջ թիւարկուածներ մանաւանդ թէ «Սոսա-
րէն վարձուածներ» կան, որք բան գործն են
արել շարունակ սուտեր և այլն. հնարելը և
զՎեհ. Հայրապետ ազգին և զիս զօրպարտելը,
և այն մի քանի լրագիրը միմեանց բերանները
թքած լինելով իրարմ կը փոխանակեն զը-

պարտութիւնը և այլն. սակայն ստույթիւնը
և զրպարտութիւնը հիմն չունին և երկար
ժամանակ չեն կարող տևել: քանի որ խա-
ւարի գործ են, մանաւանդ թէ Վեհ. Հայ-
րապետի անձնուէր և ազգատէր ջանից փա-
ռաւոր արդիւնքը եղող մեծ սխաղործու-
թիւնը սակաւաթիւ չեն և երբ և ինչ ինչ-
նին կը խօսին և պիտի խօսին, քմահաճոյ և
պատրուակեալ հրատարակութիւնը. ընդ գը-
րուանաւ ծածկելը անկարելի է, և ոչ փո-
ղահարներու կարօտ են, թող որ ի ժամա-
նակին զբարինք անգամ կաղաղակեն և կը
խոստովանին: Կան դեռ մի քանի սխաղոր-
ծութիւնք ևս՝ զորս միայն ժամանակը շատ
լաւ պիտի պարզէ և այն ատեն դիմակները
աւելի ևս հեշտութեամբ վայր կառնուին և
սուտ կամ ճշմարիտ ազգասէրները
բացայայտ կերեին: Փոքր մի ևս համբերու-
թիւն:

Նա երբէք այս տեսակ անձնական վէճե-
րու և հրատարակութեանց միջամտելու, կամ
պատասխանելոյ սովորութիւն և սեր չունե-
նալով, ակամայ՝ միանգամայն առաջինը և
վերջինը լինելոյ պայմանաւ՝ ներկայս գրեցի
առաւելապէս հասկացնելոյ համար որ մենք
ոչ «Մասիսի» խմբագրին և նմանեցն և ոչ
նոցա հրատարակութեանց նշանակութիւն
տուած եմք և կը տամք, ապա թէ ոչ՝ ա-
ռանց Ասու լինել է քաղել» «Իրական շատ
փաստեր և նիւթեր ունիմք» երբէք զրպար-
տելով և շատախօսելով՝ նոցա դիմակները
պատուելոյ և աշխարհի առջև սպասարկու-
խայտառակելոյ համար: Սակայն ասկէց մեծ
օգուտ կենէ, և ինչու համար կարեւոր կեն-
սական և ազգօգուտ խորհրդածութիւնք՝ և
անհրաժեշտ մեծ գործերը թողած՝ այս տե-
սակ չնչին՝ անոտի վէճերով ժամանորայս լի-
նիմք՝ եթէ օտարի գործիչ չեմք և անձնա-
կան շահամոլութեամբ չեմք կուրացած:
Ողջ լինել Ձեզ մաղթեմ ի Տեառն:

«ՄԵԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻԾ

ՖԻԼԻՊՊՈՊՈԼ, 15/27 մայիսի: Կ. Պօլից
հասաւ այստեղ Ալեքսանդր Բօգարիդէս: Բո-
լոր ազգութիւններին պատկանող բնակիչնե-
րը նրան ոգևորութեամբ ընդունեցին:

ՖԻԼԻՊՊՈՊՈԼ, 15/27 մայիսի: Ալեքս-փաշա
քաղաքը մտնելու ժամանակ բոլորական
պատգամաւորների խնդիրքի համաձայն, և
սուլթանի հրամանի հակառակ, Ֆէսի տեղ
բոլորական զինարկ ծածկեց: Նրէկ Ստօլի-
պին դուրս եկաւ Կօնակից, հեղուց դուրս կը
գայ Ֆիլիպպոլից:

Ս. ՊԵՏԵՐՈՒՐԻ, 18 մայիսի: Մեծ Իշ-
խանուհի Մարիա Պալլադիսայի առողջութեան
մասին հրատարակած բիւլետենի մէջ ասված
է, որ Հիւանդի առողջութիւնը երէկվանից
ծանր դրութիւն է ստացել: Հիւանդի մէջ
ոյժերի կորուստ է նշանակում: «НОВОЕ
ВРЕМЯ» լրագիրը լսել է, որ պետական յան-
ցաւոր Սոյոլիովի պաշտպան նշանակվել է
երդուեալ հաւատարմատար Տուրչանինով:

ՕԴԵՍՍԱ, 17 մայիսի: Մեր գրաւող զօրքերի
վերադարձը սկսվեցաւ: Տեղափոխութիւնը կա-
տարվում է Ռուսաստան կը յետքերի և «Ձի-
խաչօ», «Կօրնիլով», Նախիմով, և «Չերկասի»
շողենաւերի վրա: Արդէն հասան այստեղ Նա-
րոպովսկի և Շույսկի գունդերը իրանց բեռ-
նակիր սայլերով և թնայնութիւնով:

ԼՕՆԻՊՈԼ, 17/29 մայիսի: Գանդակամից հե-
ռագրում են, որ անգլիական բոլոր զօրքերին
հրամայած է յետ քաշվել Անգլո-սաքսոնա-
կան նոր սահմանի այս կողմը:

ՀՌՕՍՄ, 16/28 մայիսի: Էտնա հրաբուխի
վիժումն սկսվեց: Մեծ խնայի և Բեդիթի մէջ
սաստիկ քարէ անձրեւ է գալիս: Նրէկ Բեդ-
իթի մէջ երկրաշարժ կար:

ՄԵՍՍԻՆԱ, 17/29 մայիսի: Էտնա հրաբուխ-
ի արեւմտեան զաւիթայի վրա նոր բերան
բացվեց, որից սաստիկ հոսում է լաւա: Նրա-
ջաններին վտանգ է սպառնում: Բնակիչնե-
րը փախչում են:

Խմբագիր-Հրատարակող ԳՐԻԳՐԻ ԱՐՇԵՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր

ՄԻՐԱՅԻՆՆԵՐ ԿԱՄՈՒՐՁԻ մօտ Չուբայրի տան մէջ գտնուած Ն. Ա. ԴՈՍԱՐԱՅԱՌԻ «ՊԱՐՏԱՄՈՒՐԱԿՆԵՐԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ գրաւով և պարտամուրհակով ՓՈՂ է տալիս, գրնում է առևտրական ՊԱՐՏԱԹՂԹԵՐ, ծախում է ներքին փոխառութեան ՏՈՄՍԱԿՆԵՐ վճարը մաս մաս ստանալով, կատարում է զանազան ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Մի և նոյն տեղը գտնուում է «ԽՈՐՀՐԴԱՅԵԼՈՒ ԵՒ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ» որտեղ կարելի է տեղեկութիւններ ստանալ «ԲԱՂԱՐԱՅԻՆ» «ԲՐԻՇԿԱՆ» և «ԱՌԵՒՏՐԵԿԱՆ» գործերի մասին: Գրասենեակը ընդունում է քաղաքային գործերի կատարումն իր ծախսերով, քրէական գործերի պաշտպանութիւն և ամեն տեսակ ԳՐԱՌՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆԵՐ: Ի նկատի ունենով «ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐԻ» ունեցած չափազանց ՇԼՏ աշխատանքները ցանկացողները հրաւիրվում են ԸՆԿԵՐԱՆԱԼ: Ցանկացողները պէտք է յայտնեն մինչև յուլիսի 1-ը:

2—5

«Երկր» 1879 թվ. յուլիսի սկզբից, տեղութեան թղթատուութեամբ, թիֆլիսի մէջ հրատարակելու է ռուս «Кавказ» լրագրի չափով, քաղաքա-գրականական շաբաթաթերթ «ԵՂԱՍՏԱՆ» ռուս և հայ լեզուներով հետեւեալ պարագրամով:

- 1) Գիտատեսական ժամանակագրութիւն:
 - 2) Տեղական կեանքի ուսումնասիրութիւն, թէ տնտեսական, թէ վիճակագրական ու թէ գիւղատնտեսական կողմերից:
 - 3) Գրականութիւն, գիտութիւնների բոլոր ճիւղերի վերաբերութեամբ աշխատութիւններ, ինչն նրանք թարգմանութիւններ թէ ինքնուրոյնութիւններ: Վնասդատութիւն ռուս, հայ և օտարազգի գրականութիւնների:
 - 4) Քաղաքականութիւն, քաղաքական հայեացք և յօդուածներ միջազգային իրաւունքի հարցերի նկատմամբ:
 - 5) Մանր լուրեր:
 - 6) Մանաւոր յայտարարութիւններ:
- «ԵՂԱՍՏԱՆ» շաբաթաթերթի տարեկան բաժանորդագինը, թիֆլիսում, առանց տուժ հասցնելու.
- | | |
|--|------------|
| Տուժ հասցնելով | 5 ռուբլ. |
| Ռուսոյ զանազան քաղաքների դրկելով | 5 ռ. 50 Կ. |
| Փոստային գաղնակցութեամբ դրկելով արտասահման | 6 ռուբլ. |
| Ստորագրութիւն ընդունվում է թիֆլիս Կենտրոնական գրաւաճառանոցում: | 7 ռուբլ. |
- «ԵՂԱՍՏԱՆ» համար բոլոր նշանակելի նամակագրութիւնները, ինչպէս նաև պահանջները, օտարաքաղաքացիք պիտի բարեհաճեն մինչև ուրիշ նոր յայտարարութիւն դուրս գալը ուղարկել ուղղակի «ԵՂԱՍՏԱՆ» լրագրի խմբագրին այս հասցեով. Григорію Тер-Меліксетову, редактору газеты "Трудъ", въ Сололакахъ, на Сололаевской ул. у Вознесенской церкви въ старомъ мосту въ Д. Михаила Галаустова подъ № 110.
- «Երկր» և անշաղկ յօդուածներ «ԵՂԱՍՏԱՆ» խմբագրութիւնը ընդունում է միմիայն և յատկապէս ռուս, հայ, ֆրանսիական և վրացական լեզուներով: Խմբագիր-հրատարակող Գրիգոր Տէր-Մելիքեան:



ՊՐՕՑԵՍՍՈՐ ԲԵԿԿԵՐ, որ ՎԵՐԱԴԱՌԱՅԵԼ է քութակից, որովհետև այնտեղի թատրոնը պատրաստ էր, ԳՕԴՖՐՈՒԱ ԵՂԱՅՐԵՐԻ ցիրկում ԿԻՐԱԿԻ ՄԱՅԻՍԻ 20-ին դարձեալ մի ՓԱՅԼՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆ կը տայ: Կերկայացման վերջը ՎԻՃԱԿԱԽԱՂ կը լինի: Կը խաղացվեն 20 իրէզններ 150 ռ. արժողութեամբ և մէկ 2ի կամ 75 ռուբլ:

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ (ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱՂԱՅՐԵՈՒՄ)

Վաճառում են հետեւեալ հայերէն գրքերը՝	Բ. Կ.
1. Մինաս Չերազ՝ ԳՐԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ	1 —
2. — — — ԱԶԳԱՅԻՆ ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ	1 —
3. — — — ԻՆՉ ՇԱՀԵՑԱՆԻ ԲԵՐԼԻՆԻ ՎԵՂԱԺ	40 —
4. — — — ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԻՏԱԼԻԱՑ	60 —
5. Առաքելեան՝ ԳԵՈՐԳ ՌՕԼԼԻՍՏՈՆ (Թարգմ.)	60 —
6. ՍՈՒՆԳՈՒԿԵԱՆ ՊԷՊՈ կոմիդիայ 3 ար.	60 —
7. Բարրօ՝ Երեւանների առ իրենց ծնողք պարտ.	40 —
8. Տիւզէնճեան Տոմարակալութիւն (կազմած)	2 —
9. Կոստանեան՝ Հիւսուածք 3 հատոր	3 —
10. Պող և Վիրգինէ, ոսկեկազմ, գրաբար	3 50

Շուտով լոյս կը տեսնի Ավետարանի ԹԱԽԱՄԱՋ ՄԵՂՈՒ անունով գրքովը, թարգմանութիւն օր. ՏԵՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆԻ, գեղեցիկ պատկերներով, զինք լինելու է 40 Կ. գրքովը արժանացել է առաջին ՊԱՐԳԵՒԻ Թրէքեան ընկերութեան, վաճառվելու է ԿԵՆՏ. ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ:

Անցադիրների կանոնադրութեան XIV հատորի 1 յօդուածի համեմատ ոչոք իրաւունք չունի հետեւեալ իր բնակութեան տեղից առանց օրինաւոր վկայութեան կամ անցադրի (յօդ. 2, 5, 4, 9, 10, 12, 13, 14, և 15 նոյն կանոնադրութեան): Նոյն կանոնադրութեան 141 յօդուածի համեմատ մեջ չաները, բոլոր կարգի գիւղացիք և ծառաները, որոնք իրանց բնակութեան տեղից բացակայ են և գտնվում են կայսրութեան զանազան տեղերում 30 վիստ հեռավորութեամբ իրանց բնակութեան տեղից արհեստներով կամ աշխատանքով ապրելու համար, պարտաւոր են տալիս անցադիրներ ունենալ: Փառալուծեան մէջ գտնվող և ծառայութեանց դուրս եկած աստիճանաւորների համար, նոյնպէս հոգեւորականների, կուսակրօնների, սոհմական և անձնական աղուականների, որանց պարկիւնների անցադր վերցնելու ձեւը մեկնված է անցադիրների կանոնադրութեան XIV հատորի 51, 52, 57, 59, 60, 63, 68, 71, 72, 75, 89, 92, 112, 118, 119, 139, և 142 յօդուածների մէջ: Նոյն կանոնադրութեան 41 յօդուածի համեմատ ժամանակավիճոցը անցած անցադրով ոչոք ոչ մի տեղ ապրել չէ կարող: Այն անձները, որոնք ժամանակավիճոցը անցած անցադիրներ ունեն, կամ նրանց կորցրել են, պարտաւոր են անցադիրների կանոնադրութեան 42 և 211 յօդուածների համեմատ վարվել: Առանց օրինաւոր վկայութեան կամ ժամանակավիճոցը անցած անցադիրներով ապրողները, բացի այն որ պէտք է տան հարկաւոր վճարը անցադրի համար հաշտարար դատաւորներից որոշված պատիժների կանոնադրութեան 61 յօդուածի համեմատ ենթարկվում են դրամական տուգանքի, որ լինելու օրը 15 կօպէկից և ընդհանուր գումարով 10 ռուբլուց ոչ աւելի: Նոյն տուգանքի ենթարկվում են և նրանք, որոնք իրանց մօտ պահում են մարդկերանց առանց անցադրի, կամ ժամանակավիճոցը անցած անցադրով: Վերեւ մեկնած հանգամանքները ի նկատի ունենով առաջարկում են Քիշլիսի բնակիչներին, եթէ նրանց մօտ բնակվում են կամ ծառայում են այնպիսի մարդիկ որոնք օրինաւոր անցադիրները չունեն, կամ որոնց անցադիրների ժամանակավիճոցը անցել է, պարկիւններին ներկայացնել իմ վարչութիւնը, հաւաքակ դէպքում այս պահանջը չը կատարողները դատաստանի ենթարկվեն, հաշտարար դատաւորներից որոշված պատիժների կանոնադրութեան 61 յօդուածի համեմատ: Մի և նոյն ժամանակ հարկաւոր են համարում յայտնել քաղաքի պ. պ. բնակիչներին, որ այն անձներին, որոնք կը բռնվեն առանց վկայականների կամ անցադիրների երբէք չեմ յանձնի մէկ պատասխանատուութեամբ, այլ էտապով կուղարկեմ իրանց հայրենիքը: Մայիսի 6 1879 թ. Քիշլիսի Քիշ-

լեւի գլխաւոր Պոլիցիմէյստեր Գեղապետ Մերկինգ:

3—3

ԹԻՖԼԻՍԻ ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ պատիւ ունէ յայտնել ընկերութեան պ. պ. անդամներին, որ ընկերութեան ԲԱՍԱՐԱՆԸ արդէն վարձված է Ձիթալիսի տանը, Գօյովիսկի պրօպէկտի վրա և խնդրում է անդամական ՏՈՒՐԲԸ չը վճարող պարսներին, նոյնպէս ընկերութեան անդամ գրվել ու փող վճարելու և տոմսակ ստանալու համար ցանկացողներին զիմել ընկերութեան ստարշինա Պ. ՄԵՀՐԱՔՕՎԻՆ, Գօյովիսկի պրօպէկտի վրա, Եիսովի տանը, խանութ № 5:

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՂԱԲԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ իր ներկայութեամբ ՄԱՅԻՍԻ 22-ին լինելու է ԱՃՈՒՐԻ առանց ԿԻԿՆԱՃՈՒՐԻ ԴԻ ՄԵՏԵԻԻ ամրոցի և ԲԱՆՏԻ համար երեք ստուարանի ՓԱՅՏ հասցնելու համար: ՄԵՏԵԻԻ ամրոցի համար հարկաւոր է 149 սաժէն և 1 արշին, իսկ բանտի համար 136 սաժէն: Փայտը պատրաստվում է եկող 1880 թուականի համար:

3—3

200 տակառ ՑԷՄԵՆՏ (Պորտլանդի) ստացված է: Դիմել արևիտէկտոս պ. ՍԻՅԻԱՆԻՆ, Արևմտախայս փողոցում, Տէր-Առկասովի տանը:

ՄԵՐԻՄԵՆԵՆ-ՅՈՎԱՆԵՆՆԵՐ ՕՐԻՈՐԴԵՑ ուսումնարանի տարեկան քննութիւնները լինելու են հետեւեալ կարգով.— Մայիսի 15-ին Կրօն և Սրբազան Պատմութիւն „ 16 և 17 Հայոց լեզու 19 Ռուսաց լեզու 22 Թուարանութիւն 25 Բնական գիտութիւններ և Աշխարհագրութիւն Տեսուչ ուսումնարանի Ե. Չիգանեանց